1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի /նախկին Կիրով/ փողոցի թիվ 12 շենքի բակում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 08.06.2023թ. հաստատված թիվ 4374, 4375 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 0400252WCCVQ/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 12/3 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10804

22 հուլիսի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 2 շենքի թիվ 49 բնակարանի բնակիչ Հովհաննես Գեղամի Ասլանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու /նախկին Աթարբեկյան/ փողոցի թիվ 2/2բ շենքի թիվ 49 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 025077 տրված՝ 05.05.2005թ./ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002PP3X5DW/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մովսես Խորենացու փողոց թիվ 2բ շենք թիվ 49 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10814

22 հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 17.01.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002EUREKWH.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող 0.01616հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 97/2:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1082 Ա

22 հուլիսի 2023թ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ / ՆԱԽԿԻՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ / ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 25.04.2023թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի / նախկին Սպանդարյան / փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի / նախկին Սպանդարյան /փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0849հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 11-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10834

22 մայիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ / ՆԱԽԿԻՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ / ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ, ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի / նախկին Սպանդարյան / փողոցի թիվ 1 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Աշխեն Արմենի Հովհաննիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 22.05.2013թ. տրված թիվ 22052013-04-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.05.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր 2023F2LKKZ /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի / նախկին Սպանդարյան / փողոցի թիվ 1 շենքի թիվ 2 բնակարանին կից ինքնակամ կառուցված 5.4քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 1 բացվածքի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի / նախկին Սպանդարյան / փողոցի թիվ 1 շենքի թիվ 2 բնակարանին կից ինքնակամ կառուցված 5.4քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 5 159 / հինգ հազար հարյուր հիսունինը / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1084Ա

22 հունիսի 2023թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Սևան Թովմասյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0296 / կողմից 31.05.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002TE6LKG2.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող 0.0002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 27/11:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1085Ա

22 հունիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 957 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԻՎ 2 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի Արագած գյուղի 12-րդ փողոցի թիվ 16 հասցեի բնակիչ Ռիմա Աշոտիկի Կամավոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 01.06.2022թ. տրված թիվ 01062022-04-0011 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 03.05.2023թ. կազմված հատակագիծ / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 957 հասցեում գտնվող բնակելի տան սեփականության վկայականի շինությունների բնութագիր էջում նշված թիվ 2 օժանդակ շինության նպատակային նշանակությունը՝ հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը խանութի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 957 հասցեում գտնվող բնակելի տան սեփականության վկայականի շինությունների բնութագիր էջում նշված թիվ 2 օժանդակ շինության նպատակային նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1086 Կ

22 հուլիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 97 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՌԸ, 1ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 1 ԲԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 3 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Սիլվարդ Գևորգի Ճուղուրյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 15.11.2018թ. տրված թիվ 15112018-04-0040 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17.01.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023A2H5YG և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002DPQKDGE / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 97 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 0.7քմ / 0.7քմ արտաքին, ներքին 0.7քմ / մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված թվով 1 դուռը, 1 պատուհանը և 1 բացվածքը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 97 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 0.7քմ / 0.7քմ արտաքին, ներքին 0.7քմ / մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված թվով 1 դուռը, 1 պատուհանը և 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված 7 286 / յոթ հազար երկու հարյուր ութսունվեց / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10874

23 հուլիսի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Մայրանուշ Սիմոնի Համբարձումյանի լիազորված անձ՝ Միլվա Լիպարիտի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, 04-002-0020-0007 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 16.07.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 14 արձանագրություն և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002FT9KKQR/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի, 22-23կմ, թիվ 1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10884

«23» հուլիսի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վռամ Կոստանյան փողոցի 6-րդ շենք 28-րդ բնակարանի բնակիչ Անի Մերսիկի Պետրոսյանի 23.06.2023թ. դիմումը, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղի կառավարիչի կողմից տրամադրված 23.06.2023թ. թիվ N18-323 տեղեկանքը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 23.06.2023թ. թիվ 23 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Անի Մերսիկի Պետրոսյանին /ծնված՝ 14.10.1991թ., անձնագիր՝ AU 0310951/ գրավադրելու համասեփականության իրավունքով իրեն և իր անչափահաս երեխաներ Մարի Սեյրանի Հակոբյանին /ծնված՝ 01.08.2014թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 382343/ և Մանե Սեյրանի Հակոբյանին /ծնված՝ 09.03.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 208323/ պատկանելիք Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոց 79 շենքի 25-րդ բնակարանը:
2. Հսկողություն սահմանել անչափահասներ Մարի Սեյրանի Հակոբյանի և Մանե Սեյրանի Հակոբյանի ծնող Անի Մերսիկի Պետրոսյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1089

«23» հունիսի 2023թ. գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 183 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 16 ԵՎ ԹԻՎ 32 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48.3-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ և 42-րդ հոդվածները և ՀՀ Արմավիրի մարզպետի 2023 թվականի հունիսի 20-ի թիվ 01/10.1/04970-2023 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 4-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 183 որոշմամբ հաստատված թիվ 16 և թիվ 32 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ և շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10904

23 հուլիսի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, Արագածի զանգվածի թիվ 10 շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ՝ Նորայր Վասիլի Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25112021-04-0115 տրված՝ 04.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081GNKKTT3/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 2-րդ փողոց թիվ 3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10914

23 հոկտեմբեր 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մ. Մաշտոցի փողոցի թիվ 40 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ՝ Գագիկ Հովհաննեսի Գալստյանի դիմումը իրեն, Մարիամ Ալբերտի Սահակյանին, Զինահիդա Գագիկի Գալստյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25052023-04-0007 կազմված՝ 25.05.2023թ., «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 19.05.2023թ. կազմված չափագրություն և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04081KEBTWNB, 04081JY2Z2LQ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Մ. Մաշտոցի փողոց թիվ 38/2 մառան,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Մ. Մաշտոցի փողոց թիվ 38/3 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1092 Ա

23 հոկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վարուժ Բարֆյանի լիազորված անձ Էրիկ Ալֆրեդի Վարդումյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Վարուժ Բարֆյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝27.10.2022թ. տրված թիվ 27102022-04-0079 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 30.03.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023A2AVRV և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002G46ZVUW / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի բաժանված 0.02378հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող ավտոտնակի նպատակային նշանակությունը հասարակականի, գործառնական նշանակությունը խանութի փոփոխելու և ինքնակամ կառուցված ընդհանուր 28.9քմ / 28.9քմ արտաքին, ներքին 28.6քմ / մակերեսով հասարակական նշանակության շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով << ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին >> 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի բաժանված 0.02378հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 28.9քմ / 28.9քմ արտաքին, ներքին 28.6քմ / մակերեսով հասարակական նշանակության շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 113 809 / հարյուր տասներեք հազար ութ հարյուր ինը / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի բաժանված 0.02378հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող ավտոտնակի նպատակային նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը՝ խանութի:

3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի բաժանված 0.02378հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10234

23 հոկտեմբեր 2023թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա. Ասատրյան փողոցի թիվ 26 տան բնակիչ Էրիկ Ալֆրեդի Վարդումյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 27102022-04-0079 տրված՝ 27.10.2022թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 30.03.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002G46ZVUW, 04002AJUQQTX/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 4 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 4/1 խանութ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10944

23 հունիսի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, Սունդուկյան փողոցի թիվ 1 տան բնակիչ Մասիս Եսայու Բաղումյանը իրեն, Մայիս Եսայու Բաղումյանին, Ալիսա Եսայու Բաղումյանին, Սևակ Մասիսի Բաղումյանին, Վարդուշ Սեփանի Աղասյանին և Ալինա Մասիսի Բաղումյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 23.11.2021թ. տրված քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 23.11.2020թ. տրված տեղեկանք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 13.03.2023թ. հաստատված թիվ 1223 և 1224 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր/, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-04-002-0178-0003/, 0.1951հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ վարելահող հողատեսքը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող / ծածկագիր՝ 04-04-002-0178-0003/, 0.1951հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ վարելահող հողատեսքը, փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգի /կորիզավոր/:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1095 Ա

23 հոկտեմբեր 2023թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԳՍԻ ՕՀԱՆՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՐԳՍԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայկանուշ Սարգսի Օհանյանի լիազորված անձ Էդվարդ Լևոնի Ափոյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով Հայկանուշ և Հայաստան Օհանյաններին պատկանող /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 15.03.2023թ. հաստատված թիվ 1284 և 1285 գրանցամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրեր և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 30.05.2023թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լոմոնոսով 1-ին փակուղու թիվ 2 հասցեում գտնվող 0.1096հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լոմոնոսով 1-ին փակուղու թիվ 2 հասցեում գտնվող 0.1096հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Հայկանուշ Սարգսի Օհանյանի /ծնված՝ 02.01.1956թ./ և Հայաստան Սարգսի Օհանյանի /ծնված՝ 20.03.1951թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10964

23 հուլիսի 2023թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023GM9LBX և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 17.01.2023թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00375հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 8.2քմ / 8.2քմ արտաքին և 6.2քմ ներքին / մակերեսով կիսակառույց շինությունը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկաղիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00375հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 8.2քմ / 8.2քմ արտաքին և 6.2քմ ներքին / մակերեսով կիսակառույց շինությունը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող 8.2քմ / 8.2քմ արտաքին և 6.2քմ ներքին / մակերեսով կիսակառույց շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00375հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Սիլվարդ Գևորգի Ճուղուրյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10974

23 հոկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 17.01.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002EX6CJG2.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող կիսակառույց շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00375հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 97/3:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10984

«27» հունիսի 2023թ. ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷՄԻԼԻ ՀԱԿՈԲԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի 102 տուն հասցեի բնակիչ Քրիստինե Աշոտի Ասատրյանի 23.06.2023թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 23.06.2023թ. թիվ 23 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի 102 տուն հասցեի անչափահաս բնակիչ Էմիլի Հակոբի Աբրահամյանի /ծնված՝ 04.01.2017թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 550024/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով Արտուշ Ռաֆաելի Ստեփանյանին /ծնված՝ 01.01.1990թ., անձնագիր՝ 46 21 373964/ :
2. Հսկողություն սահմանել անչափահաս Էմիլի Հակոբի Աբրահամյանի խնամակալ Արտուշ Ռաֆաելի Ստեփանյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10394

27 հոկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 10 <<ՇՈՒՇԱՆ>>, ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>> ԵՎ <<ՈՍԿԵՀԱՏ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ- ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ, հիմք ընդունելով 2022թ. դեկտեմբերի 28-ի երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2023 թվականի վարձավճարների գծով արտոնությունների մասին>> թիվ 169 որոշումը, <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում և <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2023 թվականի ուսման վարձերի գծով արտոնությունների մասին>> թիվ 170 որոշումը, հիմք ընդունելով Կրթության և մշակույթի բաժնի պետի 21.06.2023թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ հաճախող երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 6 /վեց/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ